

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 փետրվարի 2015 թ.

N 93-Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ  
ՖՈՆԴՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում անտառային միջոցառումների 2015 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## **Ծ Ր Ա Գ Ի Ր**

### **ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ**

#### **1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

1. Պետական անտառային ֆոնդում 2015 թվականի անտառային միջոցառումների իրականացման նպատակն է՝

1) պետական անտառային ֆոնդի տարածքներում, ընտրելով առանձին զանգվածներ, ընդհանուր 100 հեկտար մակերեսով, իրականացնել անտառի սերմնային աճի օժանդակման միջոցառումներ, ստեղծել բարենպաստ պայմաններ անտառի գլխավոր և արժեքավոր տարատեսակների՝ սերմերի ծլման, աճի և զարգացման համար: Սերմերով անտառի բնական վերականգնման հաջողությունը պայմանավորված է ինչպես սերմերի քանակով և որակով, այնպես էլ նրանց ծլման ու հետագա աճի պայմաններով:

2) բնափայտի օգտագործման նպատակով իրականացնել անտառային ուսումնասիրություններ, մշակել նախագիծ՝ 2015 թվականի հաշվարկային հատատեղի անտառավերականգնման հատումների նշանակման և հատատեղերի հատկացման նպատակով:

#### **2. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի իրականացմամբ կբարելավվի անտառների որակական կազմը, կբարձրացվի արտադրողականությունը և կավելացվի բնափայտի պաշարները: Անտառի բնական աճի աջակցմամբ հնարավոր կլինի ստանալ կաղնու, հաճարենու, հացենու, լորենու և բոխու սերմնային ծագման մատղաշ 100 հեկտար տարածքի վրա:

Անտառային տնտեսության վարման նպատակով, ծրագրի շրջանակներում, կիրականացվի անտառային ուսումնասիրություններ, կմշակվի անտառաշինարարական նախագիծ՝ 2015 թվականի անտառավերականգնման հատումների նշանակման, հատատեղերի հատկացման և տվյալ անտառահատվածների հետագա անտառատնտեսական աշխատանքների իրականացման համար, որը կբերի անտառային ռեսուրսների ճիշտ օգտագործմանը և հետագա վերականգնման և վերահսկելիության ապահովմանը:

### 3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում 2015 թվականի անտառային միջոցառումների իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից կհատկացվի՝ 9 843 600 (ինը միլիոն ութ հարյուր քառասուներեք հազար վեց հարյուր) դրամ, որից՝

1) անտառապատման միջոցառումների իրականացման համար՝ 2 463 300 (երկու միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար երեք հարյուր) դրամ.

2) բնափայտի բնական աճի աջակցման միջոցառումների իրականացման համար՝ 2 670 000 (երկու միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար) դրամ.

3) անտառաշինական նախագծերի մշակման միջոցառումների իրականացման համար՝ 4 710 300 (չորս միլիոն յոթ հարյուր տասը հազար երեք հարյուր) դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**